



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

22 հունիսի 2021 թվականի թիվ 106 - Ա

ք. Երևան

«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՑԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումի հիման վրա 2021 թվականի ապրիլի 30-ին հարուցված թիվ 5 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողով մուտքագրված «ՇԱՆԹ» ՍՊ ընկերության Գյումրի գրասենյակի (այսուհետ՝ Ընկերություն) դիմումում նշված է լսողական մեդիաձառայություն մատուցող «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) «Ռադիո Հայ» ծրագրի կողմից Շիրակի մարզում հանրապետական ծրագրից տարբերվող, փոփոխված տեսալսողական ծրագրի հեռարձակման մասին փաստի վերաբերյալ:

Ընկերությունն իր դիմումում հայտնում է, որ Հեռարձակողը, որը Հանձնաժողովի կողմից լիցենզավորված և հանրապետական սփռում իրականացնող լսողական մեդիաձառայություն մատուցող է, Շիրակի մարզում «Ռադիո Հայ» ծրագրի միջոցով իրականացնում է իր հանրապետական սփռման լսողական ծրագրից տարբերվող, փոփոխված լսողական ծրագիր, որը խախտում է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջը, արդյունքում խախտելով առողջ մրցակցությունը հեռարձակման շուկայում:

Ընկերությունը հայտնում է նաև, որ Շիրակի մարզում «Սթայլ Մեդիա» ՍՊ ընկերության միջոցով երկար ժամանակ է ինչ «Ռադիո Հայ» ծրագրով հեռաձևավում է տեղական գովազդ՝ «Ռադիո Հայ» ծրագրի հանրապետական սփռման ժամանակ հեռարձակվող գովազդի փոխարեն և խնդրում է Հանձնաժողովին ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով Ընկերության դիմումը՝ 2021 թվականի ապրիլի 30-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի մայիսի 03-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել

իրենց պարգաբանումները, բացատրությունները, ինչպես նաև սույն թվականի ապրիլի 23-ից մայիսի 03-ն ընկած ժամանակահատվածում Հեռարձակողի կողմից հեռարձակված հանրապետական սփռման լսողական հաղորդումների ձայնագրությունները և Շիրակի մարզում «Ռադիո Հայ» ծրագրի կողմից հեռարձակված լսողական ծրագրի ձայնագրությունը (եթե առկա է):

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողի կողմից որևէ պարգաբանում և բացատրություն չի ներկայացվել:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռարձակելու համար հայտարարված ռադիոընկերությունների մրցույթի արդյունքում Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 51-Ա որոշման համաձայն՝ «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊ ընկերությանը տրամադրվել է ռադիոծրագրերի եթերային հեռարձակման թիվ 231 լիցենզիան (սփռման տարածքը՝ հանրապետական):

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 12-րդ մասը սահմանում է.

«Հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողի տեսալսողական ծրագիրը սփռման ամբողջ տարածքում որևէ ձևով չի կարող փոփոխվել»:

Փաստում ենք նաև, որ լիցենզիա ստացած Հեռարձակողը հեռարձակում է լսողական ծրագրեր և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 46-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված դրույթի պահանջը:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի նյութերը և ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ Հեռարձակողը Շիրակի մարզում «Ռադիո Հայ» ծրագրի միջոցով իրականացնում է իր լսողական ծրագրից տարբերվող, փոփոխված լսողական ծրագիր՝ խախտելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջը:

Այս խախտման վերաբերյալ վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողի կողմից որևէ բացատրություն և պարգաբանում չներկայացնելը ևս մեկ անգամ փաստում է, որ Հեռարձակողն ընդունում է իր կողմից իրավախախտումների կատարման փաստը:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում ամրագրում ենք, որ համաձայն «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի՝ հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողի տեսալսողական ծրագիրը սփռման ամբողջ տարածքում որևէ ձևով չի կարող փոփոխվել:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 56-րդ հոդվածը սահմանում է.

«Սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 12-րդ մասի, 55-րդ հոդվածի 1-ին մասի, 56-րդ հոդվածի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում՝ խախտումները չկրկնելու հանձնարարությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

22 հունիսի 2021թ.
ք. Երևան